ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

«ԹՈՒԿ-ՊԸԾՁԲ-17/01» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի

ք.Երևան « 16» « փետրվարի » 2017թ.

ժամը 12 30

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | |
| Ռ.Չոբանյան | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ֆինանսատնտեսական վարչության բյուջետային ծրագրերի և գնումների գործընթացի իրականացման բաժնի պետ |
| Հանձնաժողովի անդամներ՝ | |
| Ա.Վարդանյան | ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ |
| Մ.Կարապետյան | Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության մամուլի քարտուղար |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | |
| Վ.Հակոբյան | ՀՀ բնապահպանության նախարարության «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ-ի գնումների համակարգող |

**1. «ԹՈՒԿ-ՊԸԾՁԲ-17/01» ծածկագրով մրցույթի հրավերով սահմանված կարգով մասնակիցների վերաբերյալ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնելու և եզրակացությունը ստանալու վերաբերյալ տեղեկություններ**

---

(Ռ.Չոբանյան)

1.1. «ԹՈՒԿ-ՊԸԾՁԲ-17/01» ծածկագրով մրցույթի քարտուղարի կողմից 2017 թվականի փետրվարի 13-ին, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն հարցում է ուղարկվել ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե՝ առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե կողմից սահմանված ժամկետում ստացվել է եզրակացություն, որում նշված է, որ բացակայում է ֆ/ա Լևոն Մանուկյանի հարկ վճարողի հաշվառման համարը: Հաշվի առնելով, որ մասնակիցը ֆիզիկական անձ է, ուստի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող:

**2. «ԹՈՒԿ-ՊԸԾՁԲ-17/01» ծածկագրով մրցույթի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի ներկայացման մասին**

---

(Ռ.Չոբանյան)

2.1. 1-ին տեղ զբաղեցրած ֆ/ա Լևոն Մանուկյանի կողմից որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը էլեկտրոնային ձևով սահմանված ժամկետում ներկայացվել է ՀՀ ք.Երևան, Չարենց 46 հասցեում գտնվող ՀՀ բնապահպանության նախարարության «Թափոնների ուսումնասիրության կենտրոն» ՊՈԱԿ:

3. Հանձնաժողովը որոշեց՝

---

(Ռ.Չոբանյան)

3.1. «ԹՈՒԿ-ՊԸԾՁԲ-17/01» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչել՝ ֆ/ա Լևոն Մանուկյանին:

3.2. Պայմանագրի կնքման նպատակով «ԹՈՒԿ-ՊԸԾՁԲ-17/01» ծածկագրով մրցույթի հաղթող ճանաչված մասնակցին առաջարկել 5 օրացուցային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի կատարման ապահովում տուժանքի ձևով՝ միակողմանի հաստատված հայտարարություն և վճարման պահանջագիր՝ կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսի չափով:

3.3. Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

3.4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն, պայմանագրի կնքման համար անգործության ժամկետ չի սահմանվում:

**Կողմ՝ 3, դեմ՝ 0:**

**1. Նիստին ներկա գտնվող հանձնաժողովի անդամների անուններն ու ազգանունները:**

Հանձնաժողովի նախագահ՝ Ռ.Չոբանյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ա.Վարդանյան

Մ.Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Հակոբյան